


# Ձեզ առավել համապատասխան COVID-19 պատվաստանյութի ընտրությունը



**ԱՄՆ-ում առկա են COVID-19-ի երեք տեսակի պատվաստանյութեր:  
Հասկացեք դրանց առավելություններն ու ռիսկերը, որպեսզի կարողանաք  
ճիշտ ընտրել ձեզ համար առավել նպատակահարմար պատվաստանյութը:**



## **COVID-19-ը կարող է ծանր հիվանդություն առաջացնել**

COVID-19-ի հարուցիչը թագավարակն է, որը տարածվում է օդի միջով, երբ վարակված մարդը խոսում, փռչում, կամ հագում է փակ տարածքում: COVID-19-ը կարող է ծանր հիվանդության, թոքաբորբի ու մահվան պատճառ դառնալ: Դրա երկարաժամկետ էֆեկտները դեռևս ուսումնասիրվում են:

## **12 և ավելի բարձր տարիքի մարդկանց խորհուրդ է տրվում պատվաստվել**

CDC-ն 12 և ավել տարիքի բոլոր անհատներին խորհուրդ է տալիս ստանալ պատվաստում Covid-19-ի դեմ: Պատվաստվելը դա ձեր ընտրությունն է:

## **Պատվաստանյութի տարբերակներ**

Pfizer-BioNTech (2 չափաբաժին, 21 օր միջակայքով), հայտնի նաև որպես Comirnaty-ն լիովին արտոնագրված է FDA-ի կողմից՝ 16 և ավել տարիքի անձանց համար: Pfizer-BioNTech պատվաստանյութը ստացել է նաև FDA անհետաձգելի օգտագործման թույլտվություն՝ 12-15 տարեկան անձանց պատվաստման համար: (2 չափաբաժին, 28 օր միջակայքով) և Johnson & Johnson (1 չափաբաժին) պատվաստանյութերը ստացել են FDA անհետաձգելի օգտագործման թույլտվություն՝ 18 և ավել տարեկան անձանց պատվաստման համար:

## **Պատվաստման առավելությունները**

Ներկայումս առկա բոլոր պատվաստանյութերը

- **Ճանաչված են covid-19-ի կանխարգելման համար անվտանգ ու արդյունավետ**
- **Օգնում են պաշտպանել մարդկանց covid-19-հետևանքով ծանր հիվանդանալուց կամ մահանալուց**
- **Օգնում են կանխարգելել վիրուսի տարածումը**

Առավելագույն պաշտպանվածություն ունենալու համար մարդիկ պետք է ստանան պատվաստանյութի առաջարկվող բոլոր չափաբաժինները: Հնարավորինս շատ մարդկանց պատվաստելը կօգնի մեզ հաղթահարելու այս համաճարակը:

## **Ինչ սպասել պատվաստվելուց հետո**

**Ընդհանուր կողմնակի ազդեցություններ** (COVID-19-ի դեմ բոլոր պատվաստանյութերը). Պատվաստումից մի քանի օր անց կարող եք ունենալ ցավեր, կամ այտուցվածություն ներարկման տեղում, գլխացավեր, հոգնածություն, մկանային ցավ, սրտխառնոց, կամ՝ տենդ: Դրանք բոլորը նորմալ նշաններ են այն բանի, որ ձեր օրգանիզմում իմունիտետ է առաջանում:





## Պատվաստանյութը ստանալու հետ կապված ռիսկերը

- **Հազվադեպ, ծանր ալերգիկ ռեակցիաներ** (COVID-19-ի դեմ բոլոր պատվաստանյութերը)՝ Հազվադեպ ծանր ալերգիկ ռեակցիաներ կարող են առաջանալ դեղի չափաբաժինը ստանալուց մի քանի ժամ անց, ներառյալ նաև քորով ուղեկցվող ցանավորում կամ եղջատենդ, դժվարացած շնչառություն կամ կլման ակտ, դեմքի կամ կոկորդի այտուցվածություն, գլխապտույտ, ստամոքսի խանգարում կամ արագացած զարկերակային ճնշում:
- **Հազվադեպ, արյան մակարոդուներ** (J&J)՝ Փոքրաթիվ մարդկանց մոտ Johnson & Johnson պատվաստանյութ ստանալու առաջին մի քանի շաբաթվա ընթացքում առաջացել են շատ հազվադեպ արյան մակարոդուներ: Այդ մակարոդուները/թրոմբոզիս գոյացությունները լինում են ուղեղի, որովայնի կամ ոտքերի անոթներին և արյան ցածր մակարոդելիություն ունեցող բջիջների հետ համատեղ կարող են հանգեցնել լուրջ հիվանդությունների առաջացման: Պացիենտներից շատերը, որոնց մոտ առաջացել են նման թրոմբոզիս գոյացություններ, եղել են մինչև 50 տարեկան կանայք: Ախտանշանները նրանց մոտ սկսել են ի հայտ գալ պատվաստումից 1-2 շաբաթ անց: Մինչև օրս նման մակարոդուները ո՛չ Pfizer, ո՛չ Moderna պատվաստանյութերի հետ կապված չեն : Ո՛չ Pfizer, ո՛չ Moderna պատվաստանյութերի հետ այդ մակարոդուները մինչ օրս չեն ասոցացվում:
- **Հազվադեպ միոկարդիտներ ու պերիկարդիտներ** (Pfizer-BioNTech և Moderna). մՈՒԹ covid-19 պատվաստումից (Pfizer-BioNTech և Moderna) հետո միոկարդիտների ու պերիկարդիտների հազվադեպ դեպքեր են արձանագրվել մասնավորապես արական սեռի դեռահասների ու պատանի չափահասների մոտ՝ առավել հաճախ երկրորդ, քան առաջին չափաբաժնի ստացումից հետո՝ պատվաստումից հետո մի քանի օրվա ընթացքում: Ախտանշաններից են, մասնավորապես, կրծքավանդակի շրջանում ցավերը, շնչարգելությունը, հաճախացած շնչառությունը, սրտխփոցները, կամ թրթռոցները:
- **Հազվադեպ Գիլիան-Բարի համախտանիշ** (J&J). Արձանագրվել են Գիլիան-Բարի համախտանիշի հազվադեպ դեպքեր՝ Johnson & Johnson covid-19 պատվաստանյութի ներարկումից հետո: Գիլիան-Բարի համախտանիշը նյարդաբանական խանգարում է, որի դեպքում մարմնի իմուն համակարգը վնասում է նյարդային բջիջները՝ առաջ բերելով մկանային թուլություն, կամ, ամենածանր դեպքերում՝ կաթված: Գիլիան-Բարի համախտանիշի բազմաթիվ դեպքեր են գրանցվել Johnson & Johnson covid-19 պատվաստանյութի ներարկումից մոտ 2 շաբաթ հետո՝ առավելապես 50 և ավել տարիքի տղամարդկանց մոտ: Դիմելք բուժօգնության, եթե զգում եք ոտքերի թուլություն կամ դող, որը կարող է տարածվել դեպի ձեռքերն ու մարմնի վերին հատվածները:

## Բժշկական օգնության դիմում

Անհապաղ դիմելք բժշկի օգնության կամ զանգահարեք 9-1-1, եթե պատվաստումից հետո ունեք ծանր ախտանշաններ, ինչպես, օրինակ, շնչելու կամ կուլ տալու հետ կապված խնդիրները, դեմքի կամ կոկորդի այտուց, շնչասպառողություն, կրծքավանդակի ցավ, ոտքերի այտուց, չհանդարտվող որովայնային ցավ, ուժեղ գլխացավ, տեսողության աղավաղում, բազմաթիվ կապտուկներ կամ արյան փոքր բծեր մաշկի տակ: Չանգահարեք պատվաստման կամ առողջապահական խնամքի ծառայություններ մատուցողներին, եթե ունեք ախտանիշներ, որոնք անհանգստացնում են ձեզ կամ մի քանի օրից չեն անցնում

## Լրացուցիչ տեղեկություն

Եթե ձեզ օգնություն է հարկավոր հանդիպում նշանակելու համար կամ ունեք հարցեր, կարող եք զանգահարել (833) 422-4255

համարով, կամ էլ այցելել [VaccinateAll58](https://www.vaccinateall58.com) կամ [CDPH-ի վեբ կայքը](https://www.cdpd.org):